ՏԵՂԵԿԱՆՔ

«Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 6. Տեսալսողական տեղեկատվության լեզուն

4. Հեռարձակողները, որոնք արտադրում են նաև մանկական, ~~և (կամ)~~ լրատվական տեսալսողական հաղորդումներ~~,~~ և ֆիլմեր, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողության ~~ակամ~~ խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ~~ընկալման~~ մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ ~~կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին,~~ համապատասխանաբար առնվազն մեկական մանկական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ, ~~և~~ լրատվական տեսալսողական հաղորդում և ֆիլմ՝ ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ և (կամ) հայերեն ենթագրով: Ժեստերի լեզվով թարգմանությամբ տեսալսողական տեղեկատվության ներկայացման նվազագույն տեխնիկական պահանջները և հեռարձակման ժամերը:

Հոդված 9. Տեսալսողական հաղորդումների չարաշահման արգելքը

7. Արգելվում են տեսալսողական հաղորդումները, որոնց միջոցով տարածվում է ~~հետապնդում են~~ ազգային, ռասայական, սեռային~~,~~ ~~և~~ կրոնական, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն ~~քարոզելու նպատակ~~ կամ պարունակում են նման նպատակ հետապնդող տեղեկատվություն:

Հդված 22. Հանրային հեռարձակողների կարգավիճակը և գործունեության սկզբունքները

6. Հանրային հեռարձակողները պարտավոր են՝

1) ապահովել հեռարձակվող տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը.

2) օրվա եթերաժամը հատկացնել հայերեն տեսալսողական հաղորդումներին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի.

3) մշակել և իրականացնել ծրագրային քաղաքականություն՝

ա. հասարակական առավել հնչեղություն ունեցող տեղեկատվության հեռարձակման համար օգտագործել ամենադիտելի եթերային ժամանակը՝ ներկայացնելով խնդրի կամ հարցի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրությունը (տեղեկատվությունը), կարծիքների բազմազանությունը,

բ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնցում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարբեր տարածաշրջանների, ազգային փոքրամասնությունների, հասարակության տարբեր շերտերի ու սոցիալական խմբերի շահերը,

գ. սպառողներին մատուցել հաղորդումներ, որոնք ուղղված են ազգային, ռասայական, կրոնական~~, և~~ սեռային, տարիքային, հաշմանդամության, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշներով խտրականություն պարունակող կարծրատիպերի հաղթահարմանը,

4) ապահովել հայերեն ենթագրերով և (կամ) ժեստերի լեզվի թարգմանությամբ՝

ա. շաբաթվա ընթացքում առնվազն մեկական կրթական, առողջապահական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդման հեռարձակում,

բ. Հայաստանի Հանրապետության պետական տոներին և հիշատակի օրերին կազմակերպվող պաշտոնական միջոցառումների ուղիղ հեռարձակումները,

գ. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահի, Հայաստանի Հանրապետության նախագահի, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղիղ եթերով հեռարձակվող ելույթները, ուղերձները և նախապես ծրագրված հարցազրույցները,

դ. արտակարգ դրության ժամանակ եթեր հեռարձակվող հատուկ թողարկումները,

ե.) սոցիալական գովազդը»: